

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌԵՆԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄՈՎՍԵՍՅԱՆ

**ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՅԱԽԻ ԵՎ ԶԱՆԳԵՂՈՒՐԻ
ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ժ.02.01- «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ա. Յու. Սարգսյան

Պաշտոնական բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գ. Կ. Խաչատրյան

ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Լ. Գ. Թեյլան

Առաջատար կազմակերպություն՝ Գորիսի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. հոկտեմբերի 2-ին՝ ժամը 15.00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. հունիսի 1-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ն.Մ. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արվեստի յուրաքանչյուր գործ և նրա հեղինակի անհատականությունը արժևորվում են ոչ միայն ստեղծագործության թեմատիկայով, այլև արտահայտման միջոցների ընտրությամբ: Գեղարվեստական երկի դեպքում թեմայից ոչ պակաս կարևորվում է, թե գրողը լեզվական ինչպիսի արտահայտչամիջոցներ է ընտրել և դրանք երբ, ինչպես, ինչ նպատակով է կիրառել, քանի որ լեզվի միջոցով են գրականության մեջ դրսևորվում այս կամ այն ժողովրդի ազգային կերպարը, նրա կենսագրությունը, մտածողության ձևը:

Գեղարվեստական գրականության և նրա լեզվի ժողովրդայնացման խնդիրը դրված էր դեռևս աշխարհաբարի ձևավորման շրջանից և ցայսօր էլ **արդիական** է: Իսկ լեզվի ժողովրդայնացման ուղիներից մեկը բարբառային իրողությունների գործածությունն է:

Բարբառային իրողությունները ճանաչողական և ոճական մեծ արժեք ունեն. գեղարվեստական ստեղծագործության մեջ դրանք ունեն տարբեր գործառույթներ. բնութագրում են տվյալ տարածաշրջանի կենցաղը, բարբառը կամ խոսվածքը դարձնում են ավելի ճանաչելի և ստեղծելով համապատասխան բներանգ՝ գրական կերպարները դարձնում են ավելի գործուն, կերպավորումը՝ համոզիչ:

Բարբառները բնական հիմքն են գրական տարբերակների, և բարբառային իրողությունները հավաստի աղբյուր են՝ ուսումնասիրելու գրական լեզվի զարգացման միտումներն ու գործընթացները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ

Ուսումնասիրության համար որպես փաստական նյութ են ծառայել Զանգեզուրի և Արցախի գրողներ *Սերո Խանզադյանի, Սուրեն Այվազյանի, Գուրգեն Գաբրիելյանի, Մաքսիմ Հովհաննիսյանի, Վարդան Հակոբյանի, Սոկրատ Խանյանի, Վազգեն Օվյանի, Նորայր Ավետիսյանի, Արտաշես Ղահրիյանի, Համլետ Մարտիրոսյանի, Հրաչյա Բեգլարյանի, Սարգիս Աբրահամյանի* ստեղծագործությունները: Արցախի և Զանգեզուրի գրողները Ղարաբաղի բարբառի կրողներն են, և նրանց ստեղծագործություններում դրսևորվող բարբառայնությունները մեծ մասամբ Արցախի տարածքի խոսվածքներին հաստիկ իրողություններ են, որոնց մի մասը, բնականաբար, բնորոշ է նաև այլ բարբառների: Ուստի օգտագործել ենք նաև հայոց լեզվի տարբեր շրջանների, Արցախի և հայերենի այլ բարբառների բառամթերքն ընդգրկող աշխատանքների նյութերը, տարբեր գրողների ստեղծագործությունների լեզվաոճական առանձնահատկությունները քննող ուսումնասիրությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն աշխատանքը ձեռնարկելիս նպատակ ենք ունեցել ուսումնասիրելու Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում տեղ գտած բարբառային իրողությունները և նրանց գործառույթները ոչ միայն գեղարվեստական խոսքի ոճավորման, այլև բարբառի միջոցով գրական լեզվի հարստացման գործընթացում: Աշխատել ենք այդ նպատակն իրագործել հետևյալ խնդիրների առաջադրմամբ.

1. Խմբավորել խնդրո առարկա ստեղծագործություններում գործածված բարբառայնությունները՝ հիմք ընդունելով հայ և օտար լեզվաբանների կողմից ընդունված դասակարգումները:

2. Կատարել բարբառային բառերի իմաստագործառական, ծագումնաբանական քննություն, փորձել որոշել դրանց կենսունակությունը: Ուսումնասիրել բարբառային բաղադրյալ բառերի բառակազմական կաղապարները:
3. Քննել ուսումնասիրվող գեղարվեստական խոսքում գործածված բարբառային դարձվածները՝ որպես խոսքի պատկերավորման ու ժողովրդի կենսափոխակերպության արտահայտման խտացումներ:
4. Ուսումնասիրել ձևաբանական և շարահյուսական ոչ գրական իրողությունները՝ որպես գրողների բարբառային մտածողության բնութագրիչներ:
5. Քննել գեղարվեստական խոսքում բարբառային իրողությունների կրած փոփոխությունները, դրանց գրականացման օրինաչափությունները:

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքը Արցախի և Ջանգեզուրի ժամանակակից գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային իրողությունների ուսումնասիրության առաջին փորձն է: Գեղարվեստական գրականության մեջ բարբառայնությունների գործածությունը, գեղարվեստական խոսքում դրանց կրած փոփոխությունները հետազոտվում և ներկայացվում են որպես ուղի՝ բարբառի միջոցով գրական լեզվի հարստացման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացրել ենք ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հիմնավորել թեմայի արդիականությունը, անդրադարձել ենք տարբեր լեզվաբանների (Հր. Աճառյան, Ռ. Իշխանյան, Ա. Պապոյան, Լ. Պետրոսյան, Վ. Կատվալյան, 20-րդ դարի ռուս լեզվաբան Լ. Շչերբա և ուրիշներ) կողմից գեղարվեստական գրականության մեջ գործածված բարբառային իրողությունների արժևորմանը՝ հատկանշելով դրանց դերն ու գործառույթներն ինչպես գեղարվեստական խոսքի ռճավորման, այնպես էլ գրական լեզվի հարստացման գործում:

Առաջին՝ **«Բառային բարբառայնությունները Արցախի և Ջանգեզուրի գրողների ստեղծագործություններում»**, գլուխը կազմված է երեք բաժիններից. Առաջին՝ **«Բառային-հնչյունական բարբառայնություններ»**, բաժնում ներկայացրել ենք խնդրո առարկա ստեղծագործություններում գործածված այն բարբառային բառերը, որոնք գրական հայերենի համապատասխան բառերի հնչյունափոխված տարբերակներն են՝ դրանց միջոցով ցույց տալով բարբառի հնչյունական որոշ առանձնահատկություններ: Բնականաբար, գեղարվեստական գրականության մեջ բարբառային բառերը համապատասխան տառադարձությամբ չեն դրսևորվում, ու այդ պատճառով հնչյունական բարբառայնությունները, որպես այդպիսիք, չեն տարբերակվում: Թերևս առանձին օրինակներում որոշ հեղինակներ փորձել են համապատասխան հնչարտաբերությամբ այս կամ այն իրողության հասցեականությունը ընդգծել: Ինչպես՝ Վ. Հակոբյանը հնչյունի քմայնացումը երբեմն արտահայտում է քմայնացող հնչյունի մոտ j-ի գործածությամբ: **Լավ**

բառի բարբառային լ՛ավ¹ տարբերակը նա օգտագործում է **յավ**, իսկ **ջուր** բառի բարբառային **ճուրը՝ ճյուր** գրային նշանակումով:

Ղարաբաղի բարբառին հատուկ հնչյունափոխության դրսևորումները մեծ թիվ չեն կազմում խնդրո առարկա ստեղծագործություններում. դա փաստում է, որ դրսևորվող բարբառային իրողությունները մեծ մասամբ ստեղծագործական տարածք են մտել ականա և հիմնականում գրականացված ձևերով: Այնուամենայնիվ, հանդիպում ենք եզակի օրինակների, ինչպես՝ *ձայնեղ պայթականի խլացում բերան-պերան, հնչյունի հավելում ընկեր-հնգեր, ալևոր-հալևոր, ում-հում*, բարբառերանգ այլ հնչյունափոխություններ՝ **յոթը-օխը, երեխա-րախա, եղբայր-ախպեր, թե-թա** և այլն:

Հետաքրքրական մեկ այլ իրողություն էլ դրսևորվել է **Ֆ**-ի գործածության հետ կապված: Հայտնի է, որ Ղարաբաղի բարբառը չունի **Ֆ** հնչյունը, և փոխառություններում **Ֆ**-ի փոխարեն գործածվում է **փ**, թեպետ վերջին շրջանում բարբառը հակված է պահելու **Ֆ** հնչյունը, որը նույնիսկ բանահյուսական ստեղծագործություններում է արձանագրվում: Իսկ ահա բարբառում ակնհայտորեն **փ** հնչյունագրով արտահայտվող մի շարք բառեր, ինչպիսիք են՝ **լափետ, սփաթ, ափերիստ, հարիփ, սարափան** և այլն, քննության առարկա ստեղծագործություններում արտահայտված են **Ֆ**-ով, որն ակնհայտ գրականացում է: Ինչպես՝ **լաֆետ, սֆաթ, հարիֆ, աֆերիստ, սարաֆան ևն**: Բայց ունենք նաև **փ**-ի պահպանման սակավ դեպքեր: Օրինակ՝ *Ես ինչ իմանամ՝ գիրք, նկարներ, էրկաթեղեն, սաղսեղեն է առնում, դպրոցի շկափները լցնում*²:

Երկրորդ՝ «**Բառային-բառույթային բարբառայնություններ**», բաժնում ներկայացրել ենք Արցախի և Ջանգեզուրի ժամանակակից գրողների կողմից գործածված բարբառային բազմաթիվ բառեր՝ ցույց տալով դրանց դերը գրական համատեքստում, նաև խմբավորել դրանք ըստ ծագման: Հարցումների միջոցով փորձել ենք պարզել խնդրո առարկա ստեղծագործություններում գործածված մի խումբ բարբառային բառերի կենսունակությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսօր էլ բարբառները հայոց գրական լեզվի բառապաշարի հարստացման աղբյուր են: Բարբառի հարուստ բառապաշարի հումքը ժամանակակից բանաստեղծների ստեղծագործություններում դարձել է իրական պատկերների, տիպական կերպարների կերտման լավագույն միջոց: Դրանց գործածությունը ունի տեղական բներանգ ստեղծելու, ժողովրդի լեզվամտածողության և հոգեբանության ինքնատիպությունը ցույց տալու ոճական բեռնվածություն: Ինչպես՝ *Որից վառվող-լույս փվող փիթելան (պատրոյգ) սնունդ է առնում*³: *Առհասարակ ամեն շնչավոր նեղ օրին քաշվում է իր սամթը*⁴ (այստեղ՝ կողմ):

Գրողի կողմից բառի ընտրությունը պայմանավորված է ոչ միայն նրա տաղանդով, գեղագիտական ըմբռնումով, այլև երկի թեմատիկ առանձնահատկություններով, այն միջավայրով, որը ներկայացվում է ստեղծագործության մեջ: Եթե փորձենք ընդգծված բարբառային բառերը փոխարինել համապատասխան գրականներով, ապա կխամրի միջավայրի զգացողությունը և խոսքի բնականությունը: Հատկանշելի է մի իրողություն ևս. եթե այս կառույցները մի կողմից սահմանափակում են ստեղծագործության «հանրամատչելիությունը», այսինքն՝ այլ բարբառակիր ընթերցողը հաճախ բառարանային ընթերցմամբ պետք է ընկալի համատեքստը, ապա մյուս կողմից՝ այդօրինակ

¹ Բոլոր բարբառային բառերի բացատրությունը տվել ենք ըստ Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարանի» անհրաժեշտության դեպքում համեմատելով Հր. Աճառյանի «Հայերէն գաւառական բառարանի» և «Հայոց լեզվի բարբառային բառարանի» (ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հհ 1-4) հետ:

² Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Երևան, 2008, էջ 231:

³ Հակոբյան Վ., Ջատիկը ջրավազանի հատակին, Ստեփանակերտ, 2010, էջ 591:

⁴ Ղաիրիյան Ա., Պատրանք, Երևան, 1983, էջ 190:

գործածությունները դառնում են տվյալ հանրության լեզվական առանձնահատկությունների, նաև մշակույթի ճանաչողության իրական փաստեր: Գեղարվեստական խոսքում կրկնակի արժևորվում են բարբառային այն բառերը, որոնք գրական փոխարինիչներ չունեն: Նման բառերը գրական լեզվին հատուկ նկարագրական միջոցներով փոխարինելը խոսքը ոչ միայն զրկում է վերոնշյալ որակներից, այլև սեղմությունից, դիպուկությունից: Այսպես՝

- 1 Մազան էլ ես կբերեմ, հլա որ գինին լավ եղավ, մի երկու բանկա էլ կապած կրմզուկ կբացեմ¹: - Խմիչքի հետք գործածվող ուրելիքն էլ ես կբերեմ, հլա որ գինին լավ եղավ, մի երկու բանկա էլ կապած կրմզուկ կբացեմ:
- 2 Շունը իսկույն ետ է դառնում, ցանկանում է աստիճաններով բարձրանալ, բայց աստիճանների վրա խափանգը փակած է²: - Շունը իսկույն ետ է դառնում, ցանկանում է աստիճաններով բարձրանալ, բայց աստիճանների վրա դեպի ներքնահարկը կամ տանիքը բազված մուտքի վրա դրվող դռնակը փակած է:

Ընդգծված բառերը նշված իմաստներով փոխարինելու դեպքում կորչում են նկարագրության տիպականությունը, բներանգային առանձնահատկությունները, թուլանում դինամիկությունը, իսկ եթե հեղինակն ընտրեր մոտ իմաստ արտահայտող այլ գրական բառեր (ինչպես՝ **մազա** - **ուտելիք**, **խափանգ** - **դռնակ** և այլն), ապա կտուժեր նկարագրության հասցեավորումը, հեղինակի ասելիքը կկորցներ ներգործության ուժը, խոսքի գեղարվեստական հատկանիշները կխամրեին:

Արցախի և Ջանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերն ունեն նաև ծագումնաբանական բազմազանություն: Դրանց մեջ մեծ է և՛ բնիկ բառերի, և՛ փոխառությունների թիվը:

Հատկանշական է, որ ուսումնասիրվող ստեղծագործություններում իմաստային հետաքրքիր ծավալումներ ունեն հնդեվրոպական ծագման միավորները, որոնք վկայված չեն ժամանակակից հայերենի գրավոր հուշարձաններում, բայց առկա են հայերենի քիչ թվով բարբառներում, այդ թվում՝ Ղարաբաղի բարբառում: Այդպիսի միավորներ են **կեփ**³ (*հ.ե. ghabh*) - *1.կարթանման երկճյուղ փայտիկ, որ կապում են պարանի մի ծայրին, իսկ մյուս ծայրն անցկացնելով դրա միջով՝ բեռը պրկում, 2.զիստ, ազդր, տալ*⁴ (*հ.ե. dhel*) - *ծառի ճյուղ, հեռ*⁵ (*հ.ե. ers*) - *1.եռալը, 2.ցավ, կսկիծ* ևն :

Պատմական զարգացման ընթացքում Ղարաբաղի բարբառի բառապաշարի հարստացման արտաքին աղբյուր են եղել հիմնականում արևելյան լեզուները (արաբերեն, պարսկերեն, թյուրքական լեզուներ) և ռուսերենը: Արցախի և Ջանգեզուրի գրողների ստեղծագործություններում բառապաշարի այդ շերտը ակտիվ կենսունակությամբ է դրսևորվել: Փոխառողն, անշուշտ, բարբառն է եղել, իսկ գրողների նպատակը ժամանակաշրջանի ժողովրդական խոսքն ու մտածողությունը ընթերցողին ներկայացնելն է: Հատկանշական է Ռ. Իշխանյանի նկատառումը. «Պետք է խստորեն տարբերել նախ իր՝ գրողի կատարած փոխառությունը օտար լեզվից և այն փոխառությունը, որը ոչ թե գրողը, այլ բարբառն է կատարել»⁶:

Օրինակ՝ ամմա (*արաբ. emma, պրսկ. amma*) – *բայց, սակայն, մալադեց* (*ռուս. молодец*) – *կեցցես, չօփ* (*թյուրք. çöp*) – *չոր ճյուղ, փայտի կտոր և այլն*:

¹ Հովհաննիսյան Մ., Երկեր, հ.1, Ստեփանակերտ, 2005, էջ 241:

² Նույն տեղում, էջ 401:

³ Տե՛ս Հովհաննիսյան Լ., Ղարաբաղի բարբառի բառապաշարի հնագույն շերտերը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1, էջ 119:

⁴ Նույն տեղում, էջ 119:

⁵ Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ.3, Երեւան, 1926, էջ 81:

⁶ Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, Երևան, 1965, էջ 91:

Խնդրո առարկա գեղարվեստական ստեղծագործություններում ռուսական փոխառությունները քանակով գերազանցում են մնացած լեզուներից կատարած փոխառություններին: Արցախի բանահյուսության լեզվի քննությանը նվիրված աշխատանքի մեջ Լ. Մարգարյանը նշում է, որ բանահյուսության լեզվում արևելյան լեզուներից կատարած փոխառությունները քանակով գերազանցում են ռուսական փոխառություններին: Պատկերն այդպիսին է նույնիսկ նորագիր բանահյուսական նմուշներում, չնայած թվում է՝ նորագիր բանահյուսական նմուշներում պետք է նկատվեր ռուսերեն փոխառությունների կտրուկ աճ՝ պայմանավորված վերջին տասնամյակներում բարբառ ներհոսած ռուսերեն բառերի մեծ քանակությամբ: Սա, ըստ Լ. Մարգարյանի, կարելի է բացատրել նրանով, որ բանասացները ավագ սերնդի ներկայացուցիչներ են, իսկ բանահավաքները բանահյուսական նմուշը փոխադրելիս նախանձախնդիր են նմուշի «բնօրինակային» առանձնահատկությունները պահպանելուն¹: Գեղարվեստական գրականության պարագայում գրողի նախանձախնդրությունն ուղղված է տվյալ ժամանակաշրջանի ժողովրդի լեզվամտածողությունը ճիշտ ներկայացնելուն: Մեր կարծիքով, դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ի տարբերություն բանահյուսական լեզվի՝ խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի գեղարվեստական գրականության լեզվի բառապաշարը հարուստ է ռուսերենից կատարած փոխառություններով:

Ծագումով փոխառյալ մի շարք բառեր բարբառում և մեր օրինակներում գործածվում են փոխատու լեզվում ունեցած բառիմաստից տարբերվող նոր իմաստով: Օրինակ՝

քիլինկոշ (պրսկ. *kālīgūš*) բառը փոխատու լեզվում ունի «*եռացրած*» իմաստը, իսկ բարբառում բառիմաստը մասնավորվել է և նշանակում է «*կերակրատեսակ, որ պատրաստում են չորաթանը ջրի մեջ լուծելով և վրան յուղի մեջ խարկած սոխ լցնելով*»:

փանջաք (պրսկ. *fence*) բառը փոխատու լեզվում գործածվում է «*ձեռքի թաթ*» իմաստով, բարբառում բառիմաստի ծավալումով ունի «*մի ձեռքով՝ բռով տանելու չափով քանակություն (խտրի, հացաբույսի և այլն)*» և «*տասը կամ քսան խտրածից բաղկացած փոքրիկ դեզ*» իմաստները:

Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածված որոշ բարբառային բառերի կենսունակությունը փորձել ենք որոշել՝ հարցում կատարելով տարբեր սերունդների ներկայացուցիչների շրջանում: Առանձնացրել ենք 50 բնիկ և փոխառյալ բարբառային բառեր, որոնք գիտեն և գործածում են 70-85 տարեկան բոլոր հարցվողները (12 հոգի):

Այդ բառերի մոտ կեսը՝ **յուղոնիկ** - 1² (*աղավնի*), **քյափուռ** - 0 (*անխիղճ, անգութ մարդ*), **դալբ** - 0 (1.*կեղծ, խարխլված, 2.ծույլ, դանդաղաշարժ*), **մազա** - 3 (*խմիչքի հետ գործածվող ուրելիք*), **քյոհլան** - 0 (*արագաշարժ*), **թամբաքյու** - 0 (*մորմազգիների ընտանիքին պատկանող բույս, որի չորացրած և մանրացրած տերևները գործածում են ծխելու համար*), **մազալլու** - 0 (1.*համով, հոտով, 2. աշխույժ, հետաքրքիր*), **քյառա** - 0 (*ականջները կտրած*), **դամիշ** - 3 (*եղեգ*), **դաբա** - 0 (*կանացի երկար զգեստ*), **խափանգ** - 0 (*դեպի ներքնահարկը կամ տանիքը բացված մուտքի վրա դրվող դռնակ*), **սարթ** - 0 (1.*թունդ, բարկ, 2.համառ, 3.խիստ, դաժան, խստաբարո*), **կուփեճ** - 0 (*գորգագործների երկաթե ատամնավոր գործիք*), **ճաթ-0** (*գարուց կամ կորեկից թխած հաց*), **դիրմա** - 3, (1.*փամփուշտի արճճե մանր գնդակ, 2.փխբ. մանր (պտուղների մասին)*), **մութրուք** - 0 (*անճարակ, խեղճ ու կրակ*), **չեպվեր** - 0 (*տարողության չափ, որ հավասար է 4 լիտրի, 2. այդպիսի տարողությամբ շիշ*), **դաբաղ** - 0 (*խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հիվանդություն*) անձանոթ է բարբառախոս

¹ Տե՛ս Մարգարյան Լ., Արցախի բանահյուսության լեզուն, Մտեփանակերտ, 2011, էջ 26:

² Թվերով տրվում է համապատասխան բառն իմացողների քանակը:

միջավայրի 15-25 տարեկան բոլոր կամ գրեթե բոլոր հարցվողներին (50հոգի): Գեղարվեստական գրականության մեջ սրանց գործածությունը առավել արժևորվում է. դրանցով ոչ միայն կոլորիտ է ստեղծվում, այլև գրականությունը դառնում է այդպիսի բառային միավորների գործածության ու պահպանման եզակի միջավայր:

Հիմք ընդունելով այդ բառերի անձանորթությունը, ըստ այդմ նաև սակավ գործածությունը նոր սերնդի խոսքում՝ պայմանականորեն դրանք համարում ենք անկենսունակ միավորներ: Այդ բառերի մի մասի (**կուփեճ, ճաթ, թամբաքյու, խափանգ, դաբա**) անկենսունակությունը պայմանավորված է նրանով, որ դրանք նշանակող իրերը, երևույթները դուրս են եկել կամ այլևս քիչ են գործածվում կենցաղում, իսկ մնացած բառերը գործածությունից դուրս են մղել դրանց գրական համարժեքները:

Առանձնացրել ենք նաև կենսունակ (**փառ - 48 (թաղանթ), չոփ - 47 (1.չոր ճյուղ, փայտի կտոր, 2.փխբ. շար նիհար), ցաք - 48 (փշոտ թուփ), ճկոեղ - 50 (կքել), դորթ - 39 (ճիշտ, ճշմարիտ), չոլախ-42 (ոտքից կամ ձեռքից հաշմանդամ, կաղ), յալ - 42 (1.սարալանջ, 2.ծիու և այլ կենդանիների վզի մազ), սատոր - 47 (փայտի հաստ կոճղ, որի վրա փայտ կամ միս են ջարդում, կտրտում), փիալա - 48 (վերևը՝ լայն, տակը նեղ հախճապակե բաժակ՝ առանց ունկի)) և, այսպես ասած, միջին կենսունակություն ունեցող (**արդո - 9 (խոշոր աղացած հացահատիկ, որով կերակում են անասուններին), դալլաք - 9 (վարսավիր), փիթելա - 18 (պապրույզ), խախալ - 21 (խոշոր անցքերով մաղ՝ ցորենը գարին, ընդեղենը մաքրելու համար), արսղզ - 25 (1.անհոգ, ոչնչով չմտախոզվող, 2.անամոթ, անպատկառ, 3.դիմացկուն (բույսերի մասին), դիյամաթ - 33 (սաստիկ ցուրտ, սառնամանիք), չանչախ - 27 (շարախոս մարդ))**) բառեր:**

Հարցումների արդյունքները վկայում են, որ բարբառի զարգացման ընթացքն անընդհատական է, և այն արտացոլում է հասարակական կյանքի տեղաշարժերը: Ըստ այդմ՝ բառային մի շարք միավորներ աստիճանաբար արտամղվում են: Այս դեպքում գրավոր հուշարձանը՝ գեղարվեստական ստեղծագործությունը, դառնում է այդ բառերի ճանաչողության տարածք ու պահոց:

Երրորդ՝ «Բառիմաստային բարբառայնություններ», բաժնում քննել ենք հայերեն այն բառերը, որոնք հիշյալ գրականության մեջ գործածվել են իրենց ոչ գրական իմաստներով:

Բարբառի բառապաշարը հատկանշվում է բառիմաստային ուշագրավ իրողություններով: Դրանք իրապես բնութագրում են բառային այդ միավորների իմաստային զարգացման ընթացքը: Հատկանշական է, որ ընդհանուրհայերենյան մի շարք բազմիմաստ բառեր, ունենալով բարբառային գործածության հասցեականություն, գեղարվեստական գրականության մեջ, ըստ անհրաժեշտության, կիրառվում են հենց բարբառային իմաստներով՝ համատեքստին հաղորդելով ժողովրդախոսակցական երանգ:

Բառային այդպիսի միավորներ են **կապելը՝ «բաց թողնել (ջրի մասին)», ուզելը՝ «կանչել», պառկեցնելը՝ «խփել», նախշելը՝ «հայիոյել», քաշելը՝ «խնայել» մաքուրը՝ «միանգամայն»** իմաստներով և այլն:

Ուշագրավ են հատուկ անուններով ձևավորված բարբառայնությունները. գեղարվեստական ստեղծագործություններում բարբառային երանգավորում ունեն այն հատուկ անունները, որոնք բարբառին հատուկ հնչողությամբ էլ կերպավորված են, ինչպես՝ **Մոսո (Մովսես), Սաթի (Սաթենիկ), Սերգո (Սերգեյ), Օսեփ (Հովսեփ), Կուքի (Գրիգոր), Ուհանես (Հովհաննես), Նեսի (Ներսես), Թագուշ (Թագուհի)** և այլն:

Աշխատանքի երկրորդ՝ **«Բառակազմական բարբառայնությունները Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում»**, գլխում անդրադարձել ենք բարբառային ձևույթներով կազմված բաղադրյալ բառերին, որոնք գործածվել են Արցախի և

Զանգեզուրի գրողների կողմից: Փորձել ենք ներկայացնել դրանց գրականացման օրինաչափությունները:

Բարբառին հատուկ բառակազմական կաղապարով և բարբառային ձևայիններով կազմված բաղադրյալ բառերը բառակազմական բարբառայնություններ են, որոնք մի շարք կողմերով արտացոլում են բարբառի զարգացումն ու կրած տեղաշարժերը:

Անվանական հարադրություններից մեր օրինակներում շատ են հատկապես **կրկնավորները** և **բաղիյուսական** հարադրությունները:

Խնդրո առարկա ստեղծագործություններում կարելի է հանդիպել և՛ հնչյունափոխված (**քյասիբ-քյուսուբ** (աղքատ), **ջենտելի-մենտելի** (ցուցամոլ), **պուճախ-մուճախ** (1.անկյուն, 2.վարագույրով առանձնացված մաս), **քիսի-փիսի** (ցածր ծայնով գաղտնի խոսակցություն), և՛ անհնչյունափոխ (**լոշորակ-լոշորակ** (մեծ-մեծ), **սաք-սաք** (1.կույտերով, 2.մաքրասեր), **լոպագ-լոպագ** (մեծամտաբար), **լախ-լախ** (լիսխացող, խախուր), **լող-լող** (երկարահասակ, նիհար), **թուփակ-թուփակ** (կույտերով) կրկնավոր բարդությունների:

Բարբառային կրկնավոր բարդությունները մեծ մասամբ կազմվում են առանց կապակցական տարրի, հազվադեպ կարող են կապակցվել շաղկապով (**ձեն ու ձուն**): Նմանաձայնական բառերից բաղադրված մի խումբ կրկնավոր բարդության բաղադրիչներ կապակցվում են **հա** մասնիկով՝ **քրռ հա քրռ, քահ հա քահ, դրռ հա դրռ, դրըխկ հա դրըխկ** և այլն: Ղարաբաղի բարբառն «**անընդհատ**» իմաստով գործածում է **հա** բառը (*հա խոսում ա՛ անընդհատ խոսում է*): Այս բաղադրություններում **հա**-ն բառակազմական դեր է կատարում՝ պահպանելով իր «անընդհատ» իմաստը: Օրինակ՝ *Վարսենը գլխաշորը քաշում է բերանին, Աշխենը քր՛ն հա քր՛ն ծիծաղում է՛*:

Բաղիյուսական բարդությունները խնդրո առարկա ստեղծագործություններում իրենց քանակով զիջում են կրկնավորներին, սակայն ներկայանում են կառուցվածքային և իմաստագործական բազմազանությամբ: Բաղիյուսական բարդությունների բաղադրիչները կարող են բաղադրված լինել կապակցական տարրով՝ **ու** շաղկապով՝ **թոռ ու թաց, լեն ու բոլ, թուփն ու ծուպը**, և կարող են բաղադրվել առանց շաղկապի՝ **շոր-շիրթ, սաղ-սալամաթ**: Բարբառում բաղիյուսական բարդության կազմության կենսունակ միջոց է տարբեր աղբյուրներից ծագած բաղադրիչներով կազմությունը: Առաջանում են հետևյալ կաղապարները.

ա. **Բնիկ եզր + փոխառյալ եզր**, ինչպես՝ **լեն ու բոլ** – *ընդարձակ* (գրբ. լայն + թյուրք. *bol-լայն, արձակ*), **քարով-քոլով** (գրբ. *քար- կարծր ապար + թյուրք. kol-թուփ, մացառ*),

բ. **փոխառյալ եզր + բնիկ եզր**, ինչպես՝ **բոլ-հերիք** – *բավական* (թյուրք. *bol - լայն, արձակ + գրբ. հերիք*), **ալավ-կրակ** – *հուր, բոց* (պրսկ., թյուրք. *alav - բոց + գրբ. կրակ*):

գ. **Փոխառյալ եզր + փոխառյալ եզր**, ինչպես՝ **զուռնա-ղավալ** (պրսկ. *zurna + թյուրք. kaval - սրինգ, թմբուկ*), **բախչա ու բաղ** – *պարտեզ, այգի* (պրսկ. *bagče - պարտեզ + պրսկ bag-խաղողի այգի*), **յորղան-դոշակ** (թյուրք. *yorgan - վերմակ + պրսկ. došāk - ներքնակ*) և այլն:

Առաջին և երկրորդ տարբերակների դեպքում ակնհայտ է, որ այդ բարդությունները բարբառի ստեղծած կառույցներ են, երրորդի դեպքում հնարավոր է դրանց՝ որպես պատրաստի կառույցների փոխառությունը:

դ. Հաճախ Արցախի և Զանգեզուրի գրողների կողմից կազմվում են նոր բաղիյուսական բարդություններ՝ բարբառային և գրական բառաշերտերին պատկանող բառերի հարադրությամբ, այսինքն՝ **բարբառային եզր + գրական եզր**. դա ևս գրականացման ընթացքի վկայություն է: Այդպիսինն է **ռեխ-բերան** բարդությունը, որի երկրորդ բաղադրիչը գրական է (Ղարաբաղի բարբառում՝ **պերան**) կամ **ծայր ու պուճախ** բարդությունը, որի

¹ Հովհաննիսյան Մ., Երկեր, հ.1, Ստեփանակերտ, 2005, էջ 322 :

առաջին բաղադրիչը գրական, երկրորդը՝ բարբառային բառաշերտին է պատկանում: Ղարաբաղի բարբառը նույն իմաստով գործածում է **քունջ ու պունճախ** հարադրությունը: Բարբառի և գրական լեզվի սերտ հարաբերությունները կարող են կայունացնել բաղադրության բարդությունների կազմության այս միտումը:

Բարբառային բայական հարադրությունները Արցախի և Չանգեզուրի գրողների ստեղծագործություններում յուրօրինակ կիրառություն ունեն: Օգտագործվելով գրական համատեքստում՝ բարբառային հարադիր բարդությունները հաճախ մասնակի գրականացվում են՝ կրելով որոշակի կառուցվածքային փոփոխություններ: Այս տիպի բարդություններում առկա է մի օրինաչափություն. հիմնականում գրականացվում է անվանաբայական հարադրությունների բայական բաղադրիչը՝ խոնարհվելով գրական հայերենի հարացույցով, իսկ անվանական բաղադրիչը մնում է բարբառային: Ինչպես գրական հայերենում, այս տիպի հարադիր բարդությունների կազմության մեջ ևս ակտիվ են հետևյալ բայերը. **անել** - **կիլիպիճո անել** (արագ և անհասկանալի խոսել), **չանջ անել** (ձեռքի մատները լայն բացած՝ ուղղել դեպի մեկը՝ չարիք մաղթելով), **պոռոջ անել** (շրթունքները ծամածռելով լացակումել), **տնազ անել** (ծաղրել), **տալ** - **քացի տալ** (ոտքով հարվածել), **կեռ տալ** (ոտքը ուրիշի ոտքերի արանքը դնելով՝ կորացնելով՝ սայթաքեցնել), **կոխ տալ** (կոխկրպել), **կենալ** - **կոխ կենալ** (ըմբշամարտել, պայքարել), **տապո կենալ** (թաքնվել, լռել), **կտրել** - **դուռնա կտրել** (հիմարանալ), **խազնա կտրել** (հարստություն դիզել), **ընկնել** - **փոխս ընկնել** (մի բան սխալմամբ մյուսի տեղ ընդունվել), **թայդի ընկնել** (շտապել) ևն:

Մեր ուսումնասիրության նյութ դարձած անվանաբայական հարադրությունների անվանական բաղադրիչները դրսևորում են ձևաբանական, ծագումնաբանական և բառակազմական բազմազանություն: Դրանք կարող են լինել. **գոյական**¹ մրափ (քուն) մտնել-քնել, զոռ (ուժ) տալ - ուժ գործադրել, ուշունց (հիշոցք) տալ - անիծել, դաշանք (աղաչանք) անել-աղաչել, **ածական**² չորը տալ (ծառի չոր ճյուղերը հատել), շիլ (ծուղ, շեղ) գցել - շփոթել, **կախյալ բայարմատ**³ յորթ (երթալ) ընկնել (ձիու դանդաղ և ցատկոտելով վազելը), փաթ ընկնել (փաթաթվել), **մակբայ**⁴ աշկար (ակներև) անել (բացահայտել), պրկահան անել (քերթել, քերծել), **ձայնարկություն**⁴ հարայ (օգնության կանչ) տալ (օգնություն կանչել), հուշտ (խրտնեցնելու բացականչություն) անել (խրտնեցնել):

Այն, որ բարբառում բառակազմական կաղապարները կենսունակ են, փաստում են բնիկ և փոխառյալ եզրերով բաղադրված կառույցները, որոնք քննության առարկա ստեղծագործություններում դրսևորվում են իմաստագործառական ակտիվությամբ:

Բնիկ եզրերով կենսունակ կառույցներ են հետևյալ բայերը. **լափու**¹ (հ.ե. laph - ալիք, հորձանք) **տալ** - հորձանք տալ, **հոփ**² (հ.ե. sb - սեղմել) **տալ** - 1.սեղմել, 2.նեղել, **տուզի**³ (հ.ե. teu - բարեկամաբար ուշադրություն դարձնել) **տալ** - ակնապիշ նայել, **լոք**⁴ (հ.ե. lok - ցատկ) **տալ** - ցատկել և այլն:

Անվանական բաղադրիչը կարող է լինել փոխառություն արևելյան լեզուներից, ինչպես՝ **ճոթ** (թյուրք. jot - 1.մաս, 2.գործվածք) **անել** - բաժանել, կիսել, **չախ** (թյուրք. şax - ճյուղ) **անել** - փռել, տարածել, **դոնաղ** (թյուրք. konuk - հյուր) **անել** - հյուրասիրել, **մազա** (պրսկ. māze - խմիչքի հետ գործածվող ուրեյիք) **անել** - խմիչքի հետ ինչ-որ բան ուրել, **մարաղ** (պրսկ. mārag - դարան, թաքստոց) **կենալ** - թաքնվել, դարան մտնել և այլն:

¹ Տե՛ս Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 239:

² Նույն տեղում, էջ 448:

³ Նույն տեղում, էջ 739:

⁴ Նույն տեղում, էջ 257:

Քիչ չեն նաև անվանաբայական այնպիսի հարադրությունները, որոնց առաջին բաղադրիչը փոխառություն է ռուսերենից, ինչպես՝ **ռիսկ** (ռուս. *риск*) **անել** – *հանդգնել, փելեգրամ* (ռուս. *телеграмма*) **փալ** – *հեռագրով որևէ բան հաղորդել, զուբրիփ (ռուս. *зубрум*) **անել** – *սերտել, նոս* (ռուս. *нос* – քիթ) **մնալ** – *պարտվել, խեղճանալ, մապերիալ* (ռուս. *материал-շինանյութ*) **փալ** – *գրպարտել, զակագ* (ռուս. *заказ*) **փալ** – *պատվիրել, մաղարիչ* (ռուս. *магарыч*) **անել** – *լուրի դիմաց նվեր փալ* և այլն:*

Արցախի և Չանգեզուրի գրողների ստեղծագործություններում տեղ գտած բարբառային անվանաբայական հարադրությունների անվանական բաղադրիչները կարող են դրսևորվել նաև բարդություններով, ինչպես՝ **ծուկ-ծուկ անել** (*գաղտնի նայել*), **ղուզ-ղուզ անել** (*կռանալ*), **փապակ-փապակ գալ** (*փանջվել, փառապել*), **ղարան-ղարան լինել** (*հալածվել, քշվել*), **ճաք-ճաք լինել** (*1.ճաքճքել, 2.գոռոզամտել, 3.իր արդարացիությունը համոզելու համար ջանք թափել*), **ջոկի-ջոկի անել** (*խտրականություն դնել*), **կզո-մզո անել** (*ձգձգել*), **փահ-փահ անել** (*հաճույքի բացականչություններով գոհունակություն արտահայտել*), **թև-թև անել** (*շար ուրախանալ*), **լլխկի-թըխկի անել** (*խախուր լինելուց շարժվել*), **փաշի-փուշի անել** (*ուրախություն արտահայտել*), **կլավ-կլավ գալ** (*մլավել*), **խախալ-խախալ անել** (*կնոջ՝ պչրելով քայլելը*) և այլն: Խնդրո առարկա ստեղծագործություններում գործածված հարադիր բայերի զգալի մասը դարձվածային արժեք ունի: Ինչպես՝ **ղու-ղու կանչել** (*միայնակ, անտեր մնալ*), **փուստ գնալ** (*նպատակին չծառայել*), **շոքավոր լինել** (*հովանավորել, պաշտպանել*), **պոռոշ անել** (*լացակումել*), **քոքը կտրել** (*խապառ ոչնչացնել*), **տիտիկ անել** (*մնալ, հանգիստ նստել*), **թերթին տալ** (*հանդուգն խոսել, շաղակրատել*) ևն: Հետաքրքրական են այն կառույցները, որոնց բաղադրիչները գրական հայերենին խորթ չեն, բայց դրանցով բաղադրված բառերը, իբրև ամբողջական միավորներ, բարբառային են, ինչպես՝ **աղ դնել** (*թթու դնել*), **փայտ անել** (*փայտ հավաքել*), **ծիգ-ծիգ անել** (*ձգել*), **աղ անել** (*աղով անել*), **թև-թև անել** (*հպարտանալ*) ևն:

Արցախի և Չանգեզուրի գրողների ստեղծագործություններում ուշագրավ է համադրական բարդությունների իմաստագործառությունը: Դրանք իրենց թվակազմով զիջում են հարադրական բարդություններին, բայց և խնդրո առարկա ստեղծագործություններում հաճախադեպ են և իմաստային կշռով էլ նշանակալի են: Համադրական բարդությունների գրական հայերենի բոլոր կաղապարներն առկա են բարբառում: Հատկանշելի է, որ այդ միավորների մի մասը գրական տարբերակում կայունանալու միտում ունի, և այսօրինակ գործածությունները նպաստում են դրան: Կարծում ենք՝ գրականանալու և գրական լեզվում կայունանալու հեռանկար ունեն հետևյալ համադրական բարդությունները՝ **բրդաճանճ, թամբախորջին, դխկդխկացնել, չոռուցավ, քոքռալ, հոհոալ, չախկաչուխկ, շենամեջ** և այլն: Այդ մտածումի հիմնավորումը նրանց հաճախական կիրառությունն է և բարբառային ընդհանրական նկարագիրը:

Քննվող ստեղծագործություններում մեծաթիվ են այն համադրական բարդությունները, որոնց բարբառային բնույթն ավելի ընդգծված է և, մեր կարծիքով, գրականանալու հավանականությունը նվազ է. **թոռութաց** (*անձրևային, խոնավ*), **թահրութուիրը** (*կերպ, ձև*), **հակնուհուկը** (*որևէ գործի սկիզբը և վերջը*), **պլթալթալ** (*ետալ*), **լկլկալ** (*1.թույլ կամ խախուտ լինելուց շարժվել 2.հեկեկալ, լացել, 3.առատությունից վխտալ*), **ցնքցնքոտել** (*պղպջակները վեր-վեր թռչել*), **օխնահաց** (*ննջեցյալի մահվան յոթերորդ օրը նրա հիշատակին կազմակերպված հացկերույթը*), **քոռուփոշման** (*զղջացած*), **լոբախաշու** (*կերակրատեսակ՝ լոբիով*), **մռամոռ** (*1.մոռենու տեսակ, որի պտուղներն ավելի խոշոր են և կարծես պատված են մառով՝ մշուշով, 2.փխբ. նուրբ, փափուկ*) և այլն:

Բնականաբար, առկա են իսկական բարդությունների այնպիսի կառույցներ, որոնց բաղադրիչները ծագումնաբանորեն տարբեր են: Այդպիսիք են՝ **խազալաթափ** – *փերևաթափ* (*թյուրք. kazal-աշնանը թափված և ծառերի փակ հավաքված փերևներ + գրբ. թափել*),

շավարախառն (թյուրք. *şalvar-տարապ* + գրբ. *խառն*), **բազմավարիանյ** – շապ տարբերակներ ունեցող (գրբ. *բազում-շապ* + *ուս* *варуаһт-տարբերակ*), **դանամեր** – նոր ծագ ունեցած կով (թյուրք. *dana-հորթ* + գրբ. *մայր*), **գյուլլախորով** – գնդակով խոցված (պրսկ. *gulle-փամփուշտ* + գրբ. *խորով-խորովված*), **թիզաբոյ** (գրբ. *թիզ-բթամատից մինչև ճկույթը* + թյուրք. *boy-հասակի բարձրություն*):

Ուսումնասիրվող ստեղծագործություններում դրսևորվող հոդակապով և անհոդակապ իսկական բարդությունները մեծաթիվ են: Անհոդակապ են, օրինակ, հետևյալ բարբառային բարդությունները. **կծուկորեւ** (*կոպտեւ*), **չփրծակե** (*փոքրիկ թռչնատեսակ, որը հաճախ լինում է ցանկապատների փակ*), **սրտուզելիք** (*սրտի ցանկություն*), **մակարբաշին** (*մակարապետ*), **ծիլիանը** (*ծառի ամենավերևը*), **պինջիրփսոկ** (*թեփանման ձյուն*): Հայերենի բոլոր տարբերակներում կենսունակ հոդակապը **ա**-ն է: Ղարաբաղի բարբառում հանդես են գալիս **ա** և **ա-ը** հնչյունափոխված հոդակապերը, վերջինս քննվող ստեղծագործություններում հազվադեպ է դրսևորվում, *ինչպես՝ Որ մոռացվեն աշնան ծրլրկաթը, ծմռան պարիպասի հոգսերը*¹:

Հոդակապավոր են նաև Արցախի և Ջանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածված մի շարք բարբառային բարդություններ՝ **լախոահաչ** (*վայրահաչություն*), **սրտահեռիչ** (*մեծահոգի*), **քրաէծ** (*քարայծ*), **մածնաքսակ** (*շորից փոքրիկ տոպրակ, որի մեջ քամում են մածունը*), **հասանաքար** (*գործիքները սրելու քար*), **կըռնաբռնուկ** (*թևանցուկ*), **հերամեռ** (*հայրը մահացած*), **քաշաթուխա** (*մշուշ, մառախուղ*), **ախպերացեղ** (*ստնտուփ որդին*) ևն: **Կըռնաբռնուկ, սրտահեռիչ, լոբախաշու, մածնաքսակ** բառերը Ղարաբաղի բարբառում գործածվում են համապատասխանաբար **կըռնըփըռնուկ, սըրտըհեռէչ, լուբըխաշու, մըծնըքսակ** տարբերակներով: Փաստորեն, բարբառային բարդության հնչյունափոխված **ը** հոդակապը վերահնչյունափոխվում է **ա**-ի, որը տվյալ միավորի մասնակի գրականացման դրսևորում է:

Լեզվի բառապաշարի հարստացման ուղիներից մեկը ածանցումն է: Խնդրո առարկա ստեղծագործություններում ածանցավոր բառերը դրսևորում են հետաքրքիր բառակազմական առանձնահատկություններ: Բարբառային և գրական բառակազմական բաղադրիչների զուգորդումներով ձևավորվել են հետաքրքիր կառույցներ, որոնք, ըստ բառակազմական կաղապարների, պայմանականորեն բաժանել ենք հետևյալ խմբերի. ա) **գրական բառակազմական հիմք + բարբառային ածանց**. այս առումով ամենահաճախակի գործածվող ածանցը **-վարի** ածանցն է. **տնավարի, մեծավարի տղամարդավարի, զինվորավարի, հարազատավարի, եղբայրավարի, մտերմավարի** և այլն. Ա. Սուքիասյանը ժամանակակից գրական հայերենի ածանցների շարքում ներկայացնում է նաև **-վարի** ածանցը՝ նշելով, սակայն, որ դրանով կազմված բաղադրությունների զգալի մասը գործածվում է գործառնական «ցածր» ոճում²: բ) **Բարբառային բառակազմական հիմք + ընդհանուրհայերենյան ածանց**. այս կառույցներում ակտիվ են **-ական, -ան, -ային, -ացու, -ովի, -անոց, ան-, -ոց, -ուտ** և այլ ածանցներ, *ինչպես՝ գյոզալական, ծլլան, թոռային, դեյրացու, անհամանչ, անպոռշ, չանգչանգուտ և այլն*. գ) **բարբառային բառակազմական հիմք + գրական ածանց**. այս առումով բավականին ակտիվ է **-ություն** ածանցը, որն ունի իր բարբառային տարբերակը՝ **օթուն**: **-Ութուն** ածանցը կցելով թե՛ բուն բարբառային բառերին, թե՛ բարբառային փոխառություններին՝ գրողները կազմել են այսպիսի բառեր. **լուպազություն, դարիբության, սալդաթություն, լաչառություն, շոֆերություն, չոբանություն և այլն**: Նույն սկզբունքով հայերենի **-բար, -ավոր, -եղեն, -ենի** ածանցներով կազմվել են հետևյալ բառերը.

¹ Հովհաննիսյան Մ., Երկեր, հ.1, Ստեփանակերտ, 2005, էջ 290 :

² Տե՛ս Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1993, էջ 316:

պոզավոր, փափախավոր, սաղսեղեն, մալասենի և այլն. դ) Քիչ չեն նաև **բարբառային բառակազմական հիմք + բարբառային ածանց** կաղապարով կազմությունները, ինչպես՝ **ծլլոկ, լոպազավարի** ևն:

Նարաբաղի բարբառն ունի բառակազմական հարուստ համակարգ: Քննվող գեղարվեստական գրականության մեջ մեծ տարածում ունեն բարբառային և գրական ձևույթների կապակցությամբ ձևավորված կառույցները, որոնք դառնում են ուղի՝ բարբառի բառապաշարի հաշվին գրական լեզվի բառային ֆոնդի հարստացման համար:

Երրորդ՝ **«Դարձվածային-դարձվածաբանական բարբառայնությունները Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում»**, գլխում քննել ենք բարբառային դարձվածները՝ որպես խոսքի պատկերավորման և ժողովրդի հոգեբանության ու կենսափիլիսոփայության արտահայտման խտացումներ: Մեր աշխատանքում քննել ենք Զանգեզուրի և Արցախի գրողների ստեղծագործություններում տեղ գտած դարձվածային բարբառայնությունները՝ որպես գեղարվեստական երկի ոճավորման պատկերահամակարգի տարրեր: Դարձվածները քննել ենք՝ ենթարկելով դրանք լեզվաբանական գրականության մեջ ընդունված դասակարգումների: Ելնելով դարձվածի ընդհանուր իմաստի և դարձված կազմող բաղադրիչների իմաստների ծովվածության աստիճանից՝ դարձվածները բաժանել ենք երեք տիպի՝ **դարձվածային սերտաճում (խոսք օգիլ (խնամախոսության գնալ), լյուզվան լաց օտել (բամբասանքից փուժել), փողքումը փթթաղ ինիլ (մեղավոր լինել), ռեխը ման ածել (վավաշոր լինել)), դարձվածային միասնություն (քեթը ցեց (գոռոգ), թակ օտել (ծեծվել), նըստա մըրդավըտ կյալ (մարդկային լինել), օնքեն թուխպերը ետ տանել (տխրությունն անցնել), խոսք քաշիլ (գաղտնիքը փորձել իմանալ)) և դարձվածային կապակցություն. ուրան թափ փալ (լիցքաթափվել), խեյը տեղը չինիլ (1.անուշադիր լինել, 2.խենթ լինել), լյուս լյուսանալ (հաջողություն գալ), լյուս ընգնել (հայտնվել))** և այլն:

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածներն ըստ կառուցվածքի մաստաբանական առանձնահատկությունների բաժանվում են երկու խմբի՝ **անվանական դարձվածային միավորներ** և **հաղորդակցական դարձվածային միավորներ**: Բառակապակցության կառուցվածք ունեցող բարբառային դարձվածների իմաստային բոլոր խմբերին պատկանող դարձվածների կարելի է հանդիպել Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում. օրինակ՝ **գոյականական (հալալ ծծկեր (ազնիվ մարդ), պեց ըշկերավ արազ (ցանկալի իրականություն), օխտը պորտը (ամբողջ փոհմը)), ածականական. (մաղ կապողեն սիմ տվող (անամոթ, աներես), տափու եկած (անամոթ, անզգամ), աղու տանձ կծած (անտրամադիր), ռանդա տված (համաչափ, նաև՝ բարեկիրթ), գյուլի պատառ (շար գեղեցիկ)), բայական. (կլխեն պահել (մեծարել), թարթափն ընգնել (1.վախից թարտալ, 2.ձախորդության հանդիպել), խոսք պեց անել (գրույց սկսել), խոսքը ետ տալ (մերժել), պորտը (ինչ-որ տեղ) վեր ընգնել (այդտեղ կոփվել), պռոշը կախել (դեմքին դժգոհ արտահայտություն փալ), զինքը կոտորել (խիստ հուզվել), նամուսը տափը կոխել (անպարվել, պարվազրկել)), մակբայական (ռեխին լայեղ (իրեն վայել, արժանի), հիտիլ կապած (մի գծով, իրար ետևից), քոռի ժամը (մութն ընկած), երկու պերան (քիչ (խոսելու մասին)), աշկեն տակավը (գաղտնագողի), մտքեն դոնն ընկած (մտախոհ), ջհանդամի տակին (անհայտ հեռավորության վրա)), եղանակավորող. (մատաղ ինիմ, բոյիդ մատաղ (բարեմաղթանքներ՝ ուղղված թանկ մարդու), աշկիս վրա (սիրով, ամենայն հոժարությամբ))** ևն:

Արցախի և Զանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածվել են մեծ թվով հաղորդակցական դարձվածային միավորներ՝ իրենց գործառական, կառուցվածքային և իմաստային բազմազանությամբ: Ինչպես՝ **տանա դերին օրինյալ չկա (մտերիմից օգուր չկա), վեջը չի (ուշադրություն չի դարձնում), քաչալը ճար անող լինի, իր գլխին ճար կանի (որևէ**

պակասություն ունեցողը, եթե հնարավորություն ունենա, իր պակասությունը կվերացնի), **քոն իլ, եր կաց բախտ օգե** (ասում են անբան մարդու մասին, որ անսպասելի հաջողության է հանդիպել), **հրթնաշորը ծալին ա** (պատրաստվում է ամուսնանալ), **ինքն ա վեր կա** (անփոխարինելի է), **շոնն էլ յոր չոնել** (անտանելի է), **քիզանա հինչ կյեղիմ** (վկայում է անկեղծության մասին), **շեն կենաս** (օրհնանք) ևն:

Ժողովրդական խոսքն ու բարբառները ժամանակակից հայերենի դարձվածների հիմնական աղբյուրն են: Դարձվածը բարբառից գրական հայերենին է անցնում հիմնականում գրականացմամբ: Դարձվածների գրականացումն արտահայտվում է ինչպես դարձվածը կազմող բաղադրիչների՝ գրական համարժեքներով փոխարինելով, այնպես էլ քերականական վերջավորությունների գրականաձև կիրառությամբ: Ղարաբաղի բարբառում կան **հօքին բուլի-բուլի անել** (շողոքորթել, խորամանկել), **հափըռումը չօփ տինիլ** (մեկին գերազանցել, հնարամտությամբ մեկին խաբել), **յեմիշին լավը չաղալը կօտէ** (լավ բանը անարժանին է բաժին ընկնում), **փօխկումը փըթրաղ ինիլ** (մեղավոր լինել, թերություն ունենալ), **խըյարը ծօռ փըսնել** (գործը ձախողվել, հակառակ ընթացք ստանալ), **վը՛սկեն չօփավ պիցըրցընել/պըրանել** (շատ հարուստ լինել), **բեղա վեր ընգած պըրինձ** (անպատիվ, հարգանքից զրկված), **Աստուծ հակէն նըստել** (Աստված օգնական լինել), **կաշին դաբաղխանումը ճըն քնչիլ** (մեկի բացասական, վատ հատկություններին նախապես տեղյակ լինել), **էշը ըխպըհարումը (մոխրումը) թօլիլ ա տըվալ** (չեղած տեղից ազգական է ներկայանում), **կ'քիլու փայ տը՛ռնալ** (անտեղի կորչել, վատնվել), **ջիլավը ծը՛րքումն ա** (իշխանությունը ձեռքումն է), **յը՛ղը մածնան ա ինում** (ճշմարտություն է, ապացուցելու կարիք չկա), **էժը էծին հը՛տէ լավ ա, կանց մին սա՛րու վը՛խճարը** (յուրաքանչյուրն իրեն համապատասխան մարդու հետ, ավելի լավ է զգում), **սը՛վ օխձ տեսածը սը՛վ չաթվան կվախէ** (մի բանից տուժածը զգուշանում է այն հիշեցնող բոլոր առարկաներից), **պլօկված ճիտը չարչար օրվան տէմ ըրած** (չարչարված), **ոը՛խը կապել** (1. լռել, 2. լռեցնել), **պօզէրը տուս օնել** (ըմբոստանալ, դժգոհել), **կըլխէն ծեթը պըկասել** (հիմարանալ), **տափան մընչը՛վ յերգյինք՛** (չափազանց շատ) և այլ դարձվածներ: Դրանց մասնակի գրականացված տարբերակները՝ **պոչը բուլի-բուլի անել, բռի մեջ չոփ դնել, փողքումը փթրաղ լինել, ոսկին չոփով բարձրացնել, սեխի լավը չաղալը կուտի, բեղից ընկած բրինձ, Աստված հակին նստել, կաշին դաբաղխանից ճանաչել, էշը աղբախարում թավալ է տվել, եղը մածնիցն է լինում, էժը էծի համար լավ է, քան հազար ոչխարը, սև օձից վախեցածը սև չաթվից էլ է վախենում, պլոկված ճիտը չարչար օրվան դեմ արած, ռեխը փակել, գլխի ծեթը պակասել, տափից մինչև երկինք ևն, որոնք գործածվել են ուսումնասիրվող ստեղծագործություններում:** Այս օրինակներում, ինչպես տեսնում ենք, բարբառային դարձվածների ոչ բոլոր բաղադրիչներն են գրականացվել, դրանց կազմում շարունակում են մնալ բարբառային բառաշերտին պատկանող բառեր. **հակ** (խուրջինի երկու աչքերից յուրաքանչյուրը), **դաբաղխանա** (կաշի դաբաղելու արհեստանոց), **քաչալ** (ճաղատ), **ջիլավ** (պախուրց, սանձ), **ծեթ** (ծեթ), **չաթու** (թոկ), **էծ** (այծ) և այլն:

Բարբառային դարձվածի գրականացումը ենթադրում է նաև քերականական վերջավորությունների փոփոխություն: Փոփոխվում են ինչպես հոլովածների, հոգնակերտների, այնպես էլ բայի ժամանակաձևերի վերջավորություններն ու հանգույցները: Օրինակ՝ Ղարաբաղի բարբառն ունի **վախէ լըղարան, փախէ ճըղարան** դարձվածը, որը Մ. Հովհաննիսյանն օգտագործել է **վախեցիր լղարից, փախչի ճաղարից** տարբերակով՝ գրականացնելով **լըղար, ճաղար** բառերի բացառականի վերջավորությունը (**-ան** բարբառայինը փոխարինելով **-ից** գրականով): Նույն ձևով **ոը՛խը ճղած** (անգաղտնապահ, վայրահաչ), **վը՛զը քօռ չինավ կըտրել** (տանջամահ անել), **պաղէվը տափավը տալ**

(պատվագրել), **խըփքու տոպրակ** (1.շար խելոք, գրագետ, իմաստուն, 2.հեգն. հիմար, տիմար), **տափէն տական էլ ա** (որտեղից էլ լինի) դարձվածների հոգնակերտ և հոլովական վերջավորությունների գրականացմամբ ձևավորված տարբերակներին (**վիզը քոռ չինով կտրել, ռեխները ճղած, պատիվը տափովը տալ, խելքի տոպրակ, տափի տակից էլ լինի**) հանդիպում ենք խնդրո առարկա ստեղծագործություններում:

Քննվող ստեղծագործություններում բարբառային դարձվածների գրականացման մի յուրօրինակ ձև է բարբառային բայական դարձվածների գրականաձև խոնարհումը, ինչպես՝ 1. *Պուճուր հարս, պոռչս ճարում է մի սրաքան չայի համար*¹:

Չորրորդ՝ «**Բարբառային քերականական բարբառայնությունները Արցախի և Չանգեզուրի գրողների ստեղծագործություններում**», գլխում տրվում են ձևաբանական և շարահյուսական ոչ գրական այն իրողությունները, որոնց հանդիպել ենք ուսումնասիրվող գրականության մեջ, և որոնք գրողների բարբառային մտածողության տիպական բնութագրիչներն են: Բարբառային քերականական իրողությունների գործածումով գրողը ստեղծում է լեզվական համապատասխան տարածք՝ դրանց միջոցով գրականություն բերելով ժողովրդական մտածողություն:

Աշխատանքում փորձել ենք քննության առնել ոչ գրական քերականական ամենատարածված իրողությունները՝ կապված գոյականների հոգնակերտության, հոլովակազմության, հոդառության և բայի եղանակաժամանակային ձևերի կազմության հետ:

Անվանական համակարգի բարբառային քերականական ամենատարածված իրողություններից է **-ք**-ով և դրանով բաղադրված **-եք, -երք, -անք, -ենք** ձևայիներով հոգնակերտությունը (**քորփեք, աղջկերք, ձիանք, խոխեք, կնանիք**): Հոգնակերտության այս միջոցը գործածվել է մեր ուսումնասիրած գրեթե բոլոր գրողների ստեղծագործություններում: Արցախի բարբառակիր հեղինակները չեն խուսափել նաև բարբառային հոլովական ձևերի գործածությունից: Ղարաբաղի բարբառին հատուկ հոլովանիշ թեքոյթներով ձևավորված բազմաթիվ բառաձևեր կարելի է գտնել Արցախի և Չանգեզուրի գրողների ստեղծագործություններում, ինչպես՝ **քվոր, կնկա, տանձուն, երեխուն, Թաքվու, ապոր, աքոր, կալավը** և այլն: Ուսումնասիրության առարկա գեղարվեստական գրականության մեջ հաճախակի ենք հանդիպել **բարբառային հիմք + գրական քերականական վերջավորություն** կաղապարով բառաձևերի, այսինքն՝ բարբառային բառերը թեքվել են գրական հայերենի օրինաչափությամբ: Օրինակ՝ բարբառային հիմքին գրական հոգնակերտների հավելմամբ են ձևավորվել հետևյալ բառաձևերը. **եթիմներ, ջեջիմներ, մեզարներ, սապոզներ** ևն: Կամ բարբառային **-ին/-էն** վերջավորությունների փոխարեն գրական հայերենի սեռականի **-ի** վերջավորություն են ստացել բարբառային մի շարք հիմքեր. ինչպես՝ **արխի, քոլի, մաշինի, փեչի** ևն: Ղարաբաղի բարբառում բացառական հոլովը ձևավորվում է **-ա/ան** վերջավորությամբ և **-անա, -նըստա/նըէստեա/նիստա** բառ-մասնիկներով: Դրանց փոխարեն բարբառային մի շարք հիմքեր ստացել են **-ից** գրական վերջավորությունը: Ինչպես՝ **քոլից, տափից**:

Ժողովրդական լեզվից քննվող գեղարվեստական գրականություն թափանցած քերականական բավականին տարածված իրողություններից է բացառական, գործիական, ներգոյական հոլովների հոդառությունը, ինչպես՝ **յախիցը, փորիցը, փողովը, փոխովը, ձեռքումը**: Բարբառային քերականական իրողություն է նաև ստացական հոդի կիրառությունը համապատասխան անձնական դերանվան սեռական հոլովի հետ (**իմ լինել - չլինելս, իմ անունս ևն**), որը գրական արևելահայերենում քերականական սխալ գործածություն է:

¹Աբրահամյան Ս., Մերունդների հետ, Երևան, 2008, էջ 490 :

Գրական արևելահայերենում ցուցական հոդը բացառում է ցուցական վերադրի (որոշչի) առկայությունը. դրանց միաժամանակյա կիրառությունը հատուկ է բարբառներին (ու արևմտահայերենին), հաճախ այս երևույթը բարբառներից մուտք է գործում գեղարվեստական գրականություն, օրինակ՝ **էս խոսքս, էս սեզոնս** ևն: Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքների բնորոշ է հատուկ անունների առանց հոդի գործածությունը: Եվ հետաքրքրական է, որ խոսվածքային այս առանձնահատկությունները բնութագրող օրինակներ նույնպես դրսևորվել են: Օրինակ՝ Գավրուշ փոքր տղա էր, սիրուն, փամփփիկ տղա երեխա էր¹:

Գեղարվեստական գրականության մեջ հաճախակի հանդիպող բարբառային բայական իրողություններից է **ա** օժանդակ և վերացական բայ-հանգույցի գործածությունը գրական **է**-ի փոխարեն: Բարբառային **ա** օժանդակ բայ-հանգույցի հաճախակի կիրառությունը գեղարվեստական լեզվում բացատրվում է նրանով, որ վերջին շրջանում բանավոր խոսքում դրա գործածությունը բավական տարածում է գտել և հիմնականում կերպարների խոսքի միջոցով մուտք է գործել գեղարվեստական գրականություն: Բարբառից գեղարվեստական գրականություն մուտք գործած քերականական ամենատարածված իրողություններից է անվանաբայական ստորոգյալի բայական բաղադրիչի բարբառային **չի** տարբերակի կիրառումը **եմ** բայի անկատար ներկայի ժխտական խոնարհման եզակի թվի երրորդ դեմքի **չէ**-ի փոխարեն: Սա բավականին տարածված իրողություն է ոչ միայն բանավոր խոսքում, այլև հաճախակի է հանդիպում մեր ուսումնասիրած գրեթե բոլոր ստեղծագործություններում:

Սերո Խանզադյանի ստեղծագործություններում հանդիպել ենք նաև ըղձական եղանակի ժխտական խոնարհման բարբառային տարբերակին, որը, ի տարբերություն գրական հայերենի, վերլուծական կառուցվածք ունի և կազմվում է դրական ձևին ավելացնելով **ուչ, վէչ** ձևույթները:

Շարահյուսությունը՝ իբրև քերականության բաժին, հարուստ է ոճավորման ներքին հնարավորություններով: Գրական, խոսակցական և բարբառային շարահյուսական իրողությունները գեղարվեստական գրականության համար բացում են կառուցվածքային ձևերի, կապակցությունների և այլ իրողությունների ոճական ընտրության լայն հնարավորություն: Գեղարվեստական լեզվի ժողովրդայնությունը մեծապես պայմանավորված է նաև բարբառային և խոսակցական շարահյուսական իրողությունների գործածությամբ: Ղարաբաղի բարբառի շարահյուսական համակարգը էապես չի տարբերվում գրական հայերենի նույնանուն համակարգից. Բայց և առկա են շարահյուսական այնպիսի կառույցներ, որոնք հատուկ են ժողովրդական խոսքին, ժողովրդի լեզվամտածողությանը: Դրանց կիրառումն էլ գեղարվեստական ստեղծագործություններին համապատասխանաբար ժողովրդական խոսքի աշխուժություն ու երանգ է հաղորդում:

Ղարաբաղի բարբառի շարահյուսական առանձնահատկություններից հատկանշելի է այն, որ ուղղական հոլովով կարող են արտահայտվել գրական հայերենում տրական և ներգոյական հոլովներով արտահայտվող տեղի և ժամանակի պարագաները: Մեր ուսումնասիրած գրողների բարբառակիր լինելու մասին է խոսում նրանց կողմից հետևյալ կառույցների գործածությունը. *Ինչ կա Ստեփանակերտ*²: *Միտքը մեղավոր լռում էր այրվող ներսը*³: *Ինչ անեմ, Դանել, ջեքս հարյուրանոց չկա*⁴: *Ամառը Հեղուշը քվոր հեպ քվոր մարդուն բերին, թողին մեր տանը*⁵:

¹ Հովհաննիսյան Մ., Երկեր, հ.1, Ստեփանակերտ, 2005, էջ 342:

² Հովհաննիսյան Մ., Երկեր, հ.1, Ստեփանակերտ, 2005, էջ 332:

³ Ղահրիյան Ա., Պատրանք, Երևան, 1983, էջ 14:

⁴ Ղահրիյան Ա., Պատրանք, Երևան, 1983, էջ 28:

⁵ Հովհաննիսյան Մ., Երկեր, հ.1, Ստեփանակերտ, 2005, էջ 328:

Գրողների բարբառային լեզվամտածողության արդյունք է խնդրո առարկա գեղարվեստական գրականության մեջ տարածված շարահարությամբ կապակցված բարդ նախադասությունների առավել հաճախակի գործածությունը: Քիչ չեն նաև բարբառային շաղկապներով (**համ, ամմա, յա, թա**) կապակցությունները: Ղարաբաղի բարբառում **որ (վօր, վէր)** շաղկապը կիրառվում է **եթե, երբ** իմաստներով, և գեղարվեստական գրականության մեջ էլ հաճախակի են հանդիպում բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում պայմանի պարագա երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցվում է **որ** շաղկապով:

Քերականական բարբառայնությունների գործածությունը փաստում է նաև այն իրողությունը, որ գեղարվեստական ստեղծագործությունների լեզվական տարածքը «ցանկապատներ» չունի, և բարբառային իրողությունների ներթափանցումը օրինաչափ երևույթ է ու ընդգրկում է լեզվական բոլոր մակարդակները:

Արցախի և Ջանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային իրողությունների ուսումնասիրությունը հիմք է տալիս անելու հետևյալ **եզրակացությունները**.

1. Արցախի և Ջանգեզուրի մի շարք գրողներ կանխամտածված (իրականության պատրանք ստեղծելու, ճանաչողական նպատակներով և այլն) և ակամա (լեզվամտածողության թելադրանքով) իրենց ստեղծագործություններում գործածել են բարբառային տարբեր (**բառային-բառույթային, բառիմաստային, բառակազմական, դարձվածաբանական և քերականական**) իրողություններ՝ դրանց միջոցով գեղարվեստական գրականություն բերելով արցախցու և զանգեզուրցու հոգեբանությունը, բնավորությունն ու մտածողությունը, հարստացնելով գեղարվեստական լեզվի ոճական հնարավորությունները, խոսքը դարձնելով բնական ու անմիջական, կերպարները՝ համոզիչ:

2. Բարբառային հնչյունական իրողությունները գեղարվեստական գրականության մեջ դրսևորված չեն, քանի որ գրողները չեն պահում բարբառային տառադարձությունը:

Չնայած Ղարաբաղի բարբառը չունի **Ֆ** հնչյունը և փոխառություններում **Ֆ**-ի փոխարեն գործածում է **փ**, սակայն վերջին շրջանում բարբառը հակված է պահելու **Ֆ**-ն, մեր օրինակների մեծ մասում ևս **Ֆ**-ն հնչյունափոխված չէ՝ **սարաֆան, լաֆետ, սֆաթ, աֆերիստ** և այլն: Սա, մեր կարծիքով, գրական լեզվի ազդեցության արդյունք է:

3. Խնդրո առարկա ստեղծագործություններում գործածվում են մեծ թվով բարբառային բառեր, որոնք ունեն ծագումնաբանական բազմազանություն. կան ինչպես գրաբարից և հնդեվրոպական հիմք լեզվից ավանդված բառեր, այնպես էլ փոխառություններ: Մեծ թիվ են կազմում ռուսերենից կատարված փոխառությունները. դա բացատրվում է նրանով, որ հեղինակները, ինչպես նաև նրանց ստեղծած հերոսների մեծ մասը ապրել և ստեղծագործել են խորհրդային և հետխորհրդային տարիներին, երբ ռուսերենի կիրառությունը լայն տարածում էր գտել Ղարաբաղի բարբառում: Բարբառը հարուստ է նաև արևելյան լեզուներից կատարած փոխառություններով:

Բառային մի շարք բարբառայնություններ չունեն գրական համարժեքներ: Այս բառերը կրկնակի են արժևորվում ինչպես գեղարվեստական գրականության մեջ, այնպես էլ գրական լեզվի բառապաշարի հարստացման համար:

Մեր կողմից կատարված հարցումների արդյունքները վկայում են, որ բարբառի զարգացման ընթացքն անընդհատական է, և բառային մի շարք միավորներ աստիճանաբար արտամղվում են: Այս դեպքում գրավոր հուշարձանը՝ գեղարվեստական ստեղծագործությունը, դառնում է այդ բառերի գործածության ու պահպանման եզակի միջավայր:

Գրական լեզվի բառիմաստային տարողունակությունը ևս աճում է ընդհանուրհայերենյան բառերի բարբառային իմաստների գրականացմամբ, որը հաճախ կատարվում է գեղարվեստական գրականության միջոցով:

4. Ուսումնասիրության առարկա ստեղծագործություններում շատ են թե՛ բնիկ, թե՛ փոխառյալ բարբառային ձևայիներով կամ բարբառին հատուկ բառակազմական կաղապարներով ձևավորված բաղադրյալ բառերը: Գեղարվեստական գրականության մեջ մեծ տարածում ունեն բարբառային և գրական ձևայինների կապակցությամբ կամ բարբառային բաղադրյալ բառի ձևայիններից մեկի գրականացմամբ ձևավորված կառույցներ: Սրանք հիմնականում կազմում են գրողները՝ նպաստելով գրական լեզվի բառաֆոնդի հարստացմանը:

5. Գեղարվեստական խոսքում մեծ արժեք ունեն բարբառային դարձվածները, որոնք խնդրո առարկա ստեղծագործություններում գործածվում են ոչ միայն որպես պատկերավորման, այլև ժողովրդի կենսափոխակերպությունը, մտածողությունը խտացված, բյուրեղացված ձևով դրսևորելու միջոց: Գրական համատեքստում դարձվածները ևս մասնակի գրականացվում են՝ այդ կերպ մտնելով և տարածվելով նաև գրական լեզվում:

6. Բարբառային լեզվամտածողության և լեզվազգացողության ազդեցությամբ գրողները հաճախ գործածում են գրական լեզվի քերականական նորմերից շեղվող ձևաբանական և շարահյուսական իրողություններ, դա, ըստ մի շարք լեզվաբանների, ոչ միայն թույլատրելի է գեղարվեստական գրականության մեջ, այլև նպաստում է գրական լեզվի զարգացմանը, լեզուն պաշտպանում «ճահճացման» վտանգից:

7. Գեղարվեստական ստեղծագործությունների լեզվում լայնորեն դրսևորվում է բարբառային իրողությունների գրականացման յուրահատուկ գործընթաց, գրականացումը գրական լեզվի ազդեցությունն է բարբառների վրա: Այն տարբեր լեզվական իրողություններում տարբեր կերպ է արտահայտվում: Բարբառների՝ գրական լեզվի մոտեցման ճանապարհին ձևավորվում է խոսքի մի նոր տիպ, որը պայմանականորեն կարելի է անվանել կիսաբարբառ:

Բարբառայնությունները գրականության մեջ գեղարվեստորեն արդարացված են, դրանք մշտապես փոխազդում և մերվում են գրական լեզվի իրողությունների հետ, դա հիմք է տալիս պնդելու, որ գրողները, օգտվելով մայրենի բարբառների հնարավորություններից, կազմում են բազմաթիվ նոր բառեր ու բառաձևեր, նպաստում են գրական լեզվի հարստացմանը, ընդլայնում հայոց լեզվի զարգացման հնարավորությունները: Բարբառային իրողությունների գործածությունը գեղարվեստական գրականության մեջ բերում է կոշտ բարբառայնությունների կորուստ, որի շնորհիվ էլ մի բարբառով ստեղծված գրական ստեղծագործությունները կարող են հասկանալի լինել այլ բարբառակիրների համար:

Գեղարվեստական գրականության մեջ գործածված բարբառայնությունները իրական ու հավաստի աղբյուր են՝ ուսումնասիրելու գրական լեզվի զարգացման միտումներն ու գործընթացները:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. **Ռ.Մովսեսյան**, Բառակազմական (ածանցման) բարբառայնությունները (դիալեկտիզմներ) Արցախի և Չանգեզուրի գրողների ստեղծագործություններում, «Լրատու», Մեսրոպ Մաշտոց համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Լիմուշ» հրատ., 2015, էջ 338-344:
2. **Ռ.Մովսեսյան**, Բարբառային անվանաբայական հարադրությունները Արցախի գրողների ստեղծագործություններում, «Գիտական տեղեկագիր», Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 2015, էջ 42-46:

3. **Ռ.Մովսեսյան**, Արցախի գրողների ստեղծագործությունների բարբառային բառերի ծագումնաբանությունը և իմաստային առանձնահատկությունները, «Լրատու», Մեսրոպ Մաշտոց համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Լիմուշ» հրատ., էջ 338-343:
4. **Ռ.Մովսեսյան**, Բարբառային քերականական իրողությունները Արցախի գրողների ստեղծագործություններում, «Գիտական տեղեկագիր», Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ, 2016, էջ 90-94:
5. **Ռ.Մովսեսյան**, Բարբառային անվանական հարադրությունները Արցախի գրողների ստեղծագործություններում, «Կրթությունը և գիտությունը Արցախում» (հանդես), Երևան, «Ասողիկ», հրատ., 2016, N 3-4, էջ 77-82:
6. **Ռ.Մովսեսյան**, Բառիմաստային բարբառայնությունները Արցախի գրողների ստեղծագործություններում, «Գիտական ընթերցումներ» (հոդվածների ժողովածու), Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 2016, էջ 279 – 281:
7. **Ռ.Մովսեսյան** Բարբառային դարձվածների գրականացումը Արցախի գրողների ստեղծագործություններում, «Լրատու», Մեսրոպ Մաշտոց համալսարան, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Լիմուշ» հրատ., 2017, էջ 335-340:

**МОВСЕСЯН РЕНА АНДРАНИКОВНА
ДИАЛЕКТНЫЕ РЕАЛИИ В ПРОИЗВЕДЕНИЯХ АРЦАХСКИХ И ЗАНГЕЗУРСКИХ
ПИСАТЕЛЕЙ**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 - «Армянский язык».

Защита состоится 2017 года в ... часов на заседании специализированного совета ВАК по лингвистике 019 при Институте языка им.

Г. Ачаряна НАН РА (адрес: 0015, г. Ереван, ул. Г. Лусаворича 15).

Резюме

Любое произведение искусства и индивидуальность автора оцениваются не только тематикой произведения, но и выбором выразительных средств.

Одним из средств художественного отображения характера народа, его мышления жизненной философии является «народность» языка, которая достигается применением диалектных и разговорных единиц.

Несмотря на то, что проблема «народности» художественной литературы и ее языка поставлена еще в период формирования ашхарабара (новоармянского языка), по сей день она актуальна.

Безусловно, диалекты являются естественной основой нелитературных вариантов и в этом смысле закономерно выявление диалектных реалий в художественном произведении. Эти единицы определяются в научной литературе как диалектизмы.

Диалектизм - это характерная диалекту языковая особенность, применяющаяся в литературном языке.

Цель диссертационной работы заключается в исследовании диалектных реалий в произведениях арцахских и зангезурских писателей и их функций не только в стилизации художественной речи, но и в обогащении литературного языка посредством диалекта.

Материалом для исследования служат произведения арцахских и зангезурских современных писателей. Наличие диалектизмов в художественной литературе исследовано и представлено нами в качестве пути обогащения литературного языка.

Теоретическая и практическая значимость работы. Важнейшей теоретической задачей исследования является изучение диалектизмов в языке художественной литературы на основе произведений арцахских и зангезурских современных писателей, а в художественном языке исследование изменений диалектизмов имеет научно-практическую ценность.

Фактический материал исследования. В качестве фактического материала для исследования послужили произведения современных зангезурских и арцахских писателей Серо Ханзадяна, Сурена Айвазяна, Гургена Габриеляна, Максима Ованнисяна, Вардана Акопяна, Сократа Ханяна, Вазгена Овяна, Норайра Аветисяна, Арташеса Гарияна, Гамлета Мартиросяна, Грачи Бегларяна, Саркиса Абрамяна. Были использованы словари арцахских и армянских диалектов, а также работы, посвященные лингвостилистическим исследованиям произведений различных писателей.

Метод исследования. Исследование материала было проведено на основе сопоставительного и аналитического методов.

Структура работы. Принимая за основу особенности диалектизмов, ставших предметом исследования в разных произведениях, а также классификации, принятые в армянской и зарубежной лингвистике, мы представили классификацию диалектизмов, нашедших место в произведениях арцахских и зангезурских писателей следующим образом: **словесные (словесно-фонетические, словесно-лексемные, словесно-семантические), словообразовательные, фразеологические и грамматические диалектизмы.** Фонетические диалектизмы не обособляются, поскольку в художественной литературе не сохраняется диалектная транскрипция. Есть частичные примеры, выражающие фонетические особенности диалекта, к которым мы обратились в разделе «**Словесно - фонетические диалектизмы**».

Работа состоит из **введения, четырех глав, заключения и списка использованной литературы.**

Во **Введении** мы обратились к данным разными лингвистами оценкам диалектных единиц, нашедших место в художественной литературе, подчеркивая их роль и функции как в стилизации художественной речи, так и в обогащении литературного языка. Нами были

обоснованы актуальность исследуемой темы, теоретическая и практическая значимость работы, представлены источники, служащие фонетическим материалом для исследования.

Первая глава **«Словесные диалектизмы в произведениях арцахских и зангезурских писателей»** состоит из трех разделов. В разделе **«Словесно-фонетические диалектизмы»** представлены те диалектные слова, которые являются видоизмененными фонетическими вариантами соответствующих слов в литературном армянском языке, с их помощью мы пытались показать некоторые фонетические особенности диалекта.

В разделе **«Словесно-лексемные диалектизмы»** представлены многочисленные диалектные слова, употребленные арцахскими и зангезурскими современными писателями, показана их роль в литературном контексте и классификация по происхождению. С помощью опроса мы пытались выяснить живучесть группы диалектных слов в исследуемых нами произведениях.

В разделе **«Семантические диалектизмы»** были исследованы те армянские слова, которые в упомянутой литературе были употреблены в нелитературном значении.

Во второй главе работы **«Словообразовательные диалектизмы в произведениях арцахских и зангезурских писателей»** мы обратились к составным словам, образованным диалектными морфемами, которые были употреблены арцахскими и зангезурскими писателями. Сделаны попытки представить закономерности их литературализации.

В третьей главе **«Фразеологические диалектизмы в произведениях арцахских и зангезурских писателей»** исследованы диалектные фразеологизмы как синтез выражения слова, а также психологии и жизненной философии народа, они классифицированы по степени близости компонентов фразеологических единиц и по структурно-смысловой характеристике, сделаны попытки показать основные закономерности их литературализации.

В четвертой главе **«Грамматические диалектизмы в произведениях арцахских и зангезурских писателей»** представлены морфологические и синтаксические нелитературные выражения, которые можно часто встретить в исследуемой литературе и которые являются типичной характеристикой диалектного мышления писателей.

В заключении были обобщены и классифицированы основные положения работы.

**RENA ANDRANIK MOVSESYAN
THE DIALECTAL REALITIES IN ARTSAKH AND ZANGEZUR
WRITERS' WORKS**

Dissertation for the degree of Candidate of Philological sciences, in 10.02.01 “Armenian Language”

The defense will take place on 2017, at o'clock, at the session of the specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission) in the Institute of Language of the National Academy of Sciences after H. Acharyan (address: 0015 Grigor Lusavorich 15, Yerevan).

SUMMARY

Any work of art and author's individuality is evaluated not only by the theme of the work but also by the choice of expressive means. In literary works the writer's choice of language expressive means is no less important than when, how and for what purpose they are used.

One of the means of artistic reflection of the national character, thinking and life philosophy is the "nationality" of the language, which is achieved by the use of dialectal realities.

Though the problem of "nationality" of the literature and its language is set in the period of formation of ashkharabar (the Modern Armenian language), it is relevant to the present day.

Of course, dialects are natural bases for non-literary versions and in this sense the identification of natural dialectal realities in literary works is regular. These realities are defined in the scientific literature as dialectisms.

Dialectism is a language peculiarity particular to the dialect used in the literary language.

The aim of the work is to study dialectal realities in the works of Artsakh and Zangezur writers and their functions not only in stylization of artistic speech but also in the process of enriching the literary language through dialect.

Artsakh and Zangezur contemporary writers' works serve as **material for study**.

Theoretical and practical significance of the work. The most important task of the theoretical research is the study of dialectisms in the language of fiction in the works of Artsakh and Zangezur contemporary writers. The study of dialectal changes in the language of fiction has scientific and practical value.

The factual research material. The works of Zangezur and Artsakh contemporary writers Sero Khanzadian, Suren Aivazyan, Gurgen Gabrielyan, Maksim Hovhannisyan, Vardan Hakobyan, Sokrat Khanyan, Vazgen Ovyan, Norair Avetisyan, Artashes Ghahriyan, Hamlet Martirosyan, Hrachya Beglaryan, Sargis Abrahamyan have become the factual material for research. Besides, the dictionaries of Artsakh and Armenian dialects, as well as works devoted to linguo-stylistic research of various works have been used.

Methods of investigation. The material is investigated on the basis of comparative and analytical methods.

The structure of work. Taking as a basis the peculiarities of dialectisms which have become a research subject of different works, as well as classifications adopted in Armenian and foreign linguistics, we present the following classification of dialectisms in the works of Artsakh and Zangezur writers: verbal (verbal-phonetic, verbal-lexemic, verbal-semantic), word formation, phraseological and grammatical dialectisms. Phonetic dialectisms are not separated, because in fiction the dialectal transcription is not saved. There are partial examples expressing phonetic features of dialects to which we have turned in the section "Verbal-Phonetic Dialectisms".

The paper consists of introduction, four chapters, conclusion and bibliography.

In **Introduction** we consider the views of different linguists concerning the shaping of dialectal realities in literary works, their role and functions both in stylization of artistic speech and enriching the literary language. We examine the relevance of research, its theoretical and practical significance, sources serving as phonetic material for study.

The first chapter "**Verbal Dialectisms in the Works of Artsakh and Zangezur Writers**" consists of three subchapters. In the subchapter "Verbal - Phonetic Dialectisms" those dialectal words which are mutated phonetic variants of corresponding words in the literary Armenian language are represented. By means of them we have tried to show phonetic peculiarities of the dialect.

In the subchapter "Verbal-Lexemic Dialectisms" numerous dialectal words used by Artsakh and Zangezur modern writers as well as their role in the literary context and classification

by origin are presented. By using survey we have tried to find out the vitality of the group of dialectal words in Artsakh and Zangezur writers' works.

In the subchapter "Semantic Dialectisms" the words used in above-mentioned literature in non-literary meaning are investigated.

The second chapter "**Word-Forming Dialectisms in the Works of Artsakh and Zangezur Writers**" deals with the study of compound words formed with dialectal morphemes. Besides, an attempt is made to introduce the laws of their literalization.

In the third chapter "**Phraseological Dialectisms in the Works of Artsakh and Zangezur Writers**" we study dialectal idioms as a synthesis of word expression, psychology and life philosophy of people. They are classified by the degree of proximity of the components of phraseological units, structural and semantic characteristics. We try to show basic patterns of their literalization.

In the fourth chapter "**Grammatical Dialectisms in the Works of Artsakh and Zangezur Writers**" non-literary morphological and syntactic expressions which are widely used in above-mentioned literature and are typical features of writers' dialectal thinking are presented.

In the **Conclusion** the results of the research are presented.